



*Համարը*  
*Տիպը* Համաձայնագիր  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԱԳՆՊՏ 2017.12.27/2(39)  
*Ընդունող մարմինը* Հայաստանի Հանրապետություն  
*Ստորագրող մարմինը*  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 14.11.2017

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան  
*Ընդունման ամսաթիվը* 21.12.2016  
*Ստորագրման ամսաթիվը* 21.12.2016  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄԵԴՐԻ-ՆՈՒՐԴՈՒՋ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՏԵՂ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄԵԴՐԻ-ՆՈՒՐԴՈՒՋ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴԱՐՊԱՍԻ  
ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),  
հանդիսանալով 2001 թվականի դեկտեմբերի 27-ին Թեհրանում կնքված Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև մաքսային օրենսդրության պատշաճ կիրառման և մաքսային իրավախախտումների կանխարգելման, հետաքննության ու դրանց դեմ պայքարի համար փոխադարձ վարչական օգնության մասին համաձայնագրի կողմեր,  
հաշվի առնելով, որ Մեդրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործումը չի հանգեցնի Իրան-Հայաստան պետական սահմանագծի փոփոխման,  
հաշվի առնելով համագործակցության և բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման սկզբունքները,  
հաշվի առնելով Մեդրի և Նուրդուզ սահմանային անցակետերի արդիականացման անհրաժեշտությունը,  
մասնավորապես սույն Համաձայնագրի շրջանակներում ծառայությունների մատուցման համար,  
նպատակ ունենալով պարզեցնելու սահմանային անցման ընթացակարգերը և մաքսային ձևակերպումները՝  
ցանկացած կրկնակի գործողությունից խուսափելու համար,  
ցանկանալով ապահովել Մեդրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործումը,  
ըմբռնելով այն փաստը, որ սույն Համաձայնագրի շրջանակներում Պայմանավորվող կողմերի միջև իրականացվող վարչական օգնությունն ու փոխադարձ համագործակցությունը կհանգեցնեն մաքսային հսկողության գործընթացի բարելավման,  
համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

#### Համաձայնագրի գործողության ոլորտը և նպատակը

1. Պայմանավորվող կողմերը, իրենց միջազգային պարտավորություններին և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, Մեդրի և Նուրդուզ մաքսային անցակետերում կմատուցեն համատեղ ծառայություններ՝ ուղևորների, ապրանքների և տրանսպորտային միջոցների միջազգային փոխադրումները դյուրացնելու նպատակով:
2. Պայմանավորվող կողմերը ջանքեր կգործադրեն՝ խուսափելու համար մաքսային հսկողության կրկնակի գործողություններից՝ դյուրացնելու համար օրինական առևտուրը և տարանցիկ փոխադրումները, ինչպես նաև՝ ձեռնարկելու համար համատեղ միջոցներ արդյունավետ մաքսային հսկողության իրականացման և ապրանքները բաց թողնելու համար ծախսվող ժամանակի կրճատման ուղղությամբ:

**Հողված 2  
Սահմանումներ**

Սույն Համաձայնագրի շրջանակներում.

ա) «Համաձայնագիր» նշանակում է՝ սույն Համաձայնագիրը, դրա անբաժանելի մասը կազմող փոփոխությունները ու դրա լրացուցիչ արձանագրությունները,

բ) «Իրավասու մարմիններ» նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի մաքսային ծառայություն ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, և Իրանի Իսլամական Հանրապետության համար՝ Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային վարչություն (ԻԻՀՄՎ),

գ) «Համատեղ օգտագործում» նշանակում է՝ սահմանը հատելուն վերաբերող պաշտոնական ընթացակարգերի պարզեցում, ներդաշնակեցում և դրանց փոխադարձ ճանաչում,

դ) «Մաքսային հսկողություն» նշանակում է՝ ապրանքների գնում, հայտարարագրերում նշված տվյալների և գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթերի առկայության և հավաստիության ստուգում, տրանսպորտային միջոցների գնում, ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող կամ նրանց վրա գտնվող ուղեբեռի և այլ ապրանքների գնում և մաքսային մարմինների կողմից կատարվող այլ նմանատիպ միջոցառումների իրականացում՝ նպատակ ունենալով սպառնալից Պայմանավորվող կողմերի պետությունների մաքսային օրենսդրության և մաքսային տարածքներով տեղափոխվող ապրանքների մուտքը, ելքը, տարանցիկ փոխադրումը, տեղափոխումը և վերջնական օգտագործումը, ինչպես նաև ազատ շրջանառության մեջ չգտնվող ապրանքների առկայությունը կարգավորող այլ կանոնների պատշաճ կիրառումը,

ե) «Տեղեկատվություն» նշանակում է՝ ապրանքներին, տրանսպորտային միջոցներին կամ ուղևորներին վերաբերող տեղեկատվություն:

**Հողված 3  
Սահմանային անցակետերի միջև գործընթացները  
կանոնակարգող սկզբունքները**

1. Մուտքի երկրի Իրավասու մարմինները ելքի երկրում լրացված՝ տրանսպորտային միջոցներին և ապրանքներին վերաբերող հայտարարագրերի տվյալները պետք է ընդունեն որպես հիմք:

2. Հայտարարագրի տվյալների ճշտության ստուգմանն առնչվող մաքսային գործառնությունները հնարավորության դեպքում պետք է կատարվեն միայն մուտքի երկրում:

3. Ելքի երկրի սահմանային մաքսային մարմինն ներկայացված տրանսպորտային միջոցների և ապրանքների մասին ընդհանուր տեղեկատվությունը պետք է էլեկտրոնային եղանակով փոխանցվի մուտքի երկիր, որտեղ անհրաժեշտության դեպքում կստուգվի դրանց հավաստիությունը:

4. Ելքի երկիրը մաքսային գնման է ենթարկում միայն այն տրանսպորտային միջոցները և ապրանքները, որոնց վերաբերյալ կան օպերատիվ տեղեկատվություն կամ հիմնավոր կասկածներ: Այդ գնումը կատարվում է՝ չխախտելով այն ստուգումները, որոնք ենթակա են կատարման ելքի երկրի կողմից՝ միջազգային այն պայմանագրերից բխող պարտավորությունների շրջանակներում, որոնց Պայմանավորվող կողմերի պետությունները անդամակցում են:

5. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները հնարավորության դեպքում կխուսափեն նույնանման մաքսային գործառնությունների կրկնությունից:

6. Սույն Համաձայնագրի շրջանակի և նպատակների համար Պայմանավորվող կողմերը չեն կիրառում միակողմանի պաշտոնական ընթացակարգեր, որոնք անհամատեղելի են սույն Համաձայնագրում նշված դրույթներին:

7. Մուտքի երկիրը ելքի երկրում կատարված ապրանքներին և տրանսպորտային միջոցներին վերաբերող ընթացակարգերը համարում է անավարտ հետևյալ դեպքերում.

- ա) եթե բացակայում է հայտարարագիրը,
- բ) եթե հայտարարագրում նշված է ոչ ամբողջական տեղեկատվություն,
- գ) եթե տրանսպորտային միջոցի ֆիզիկական գնմանն արդյունքում բացահայտվում է ապրանքների հեռացման կամ փոխարինման փաստ, ինչպես, օրինակ, կեղծված կամ վնասված կապարակնիքները կամ վնասված ծածկերը կամ բեռնարկի/տրանսպորտային միջոցի վնասված լինելու այլ նշաններ:

Վերը նշված երեք դեպքերում մուտքի երկիրն իրավունք ունի թույլատրելու այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մուտքը անհամապատասխանությունների վերացումից հետո կամ վերադարձնելու դրանք ելքի երկիր: Երկու դեպքում էլ մուտքի երկիրը պետք է այդ մասին տեղեկացնի ելքի երկրին:

8. Քանի դեռ առկա է համաճարակային և վարակիչ հիվանդությունների վտանգ, Պայմանավորվող կողմերը կիրառում են ախտահանման ընթացակարգեր բուսական բեռներ, կենդանի կենդանիներ, կենդանական և բուսական ապրանքներ տեղափոխող տրանսպորտային միջոցների նկատմամբ, սակայն այդ ընթացակարգերը չեն կիրառվում մարդկանց տեղափոխող, ինչպես նաև ցանկացած այլ տրանսպորտային միջոցի նկատմամբ:

9. Պայմանավորվող կողմերը պետք է տեղեկություն փոխանակեն երկկողմ առևտրի և իրենց պետության տարածքում տեղի ունեցած մաքսային իրավախախտումների վերաբերյալ:

10. Պարզ և արագ եղանակով մաքսային ձևակերպումներ կատարելու նպատակով, որը կարող է դիտվել որպես առևտրի դյուրացման ցուցանիշ, Պայմանավորվող երկու կողմերն էլ պետք է տեղեկություն փոխանակեն իրենց համապատասխան Լիազորված տնտեսական օպերատորների (LSO) ցուցակների վերաբերյալ:

11. Պայմանավորվող կողմերը պետք է միմյանց տեղեկացնեն իրենց մաքսային կարգավորումների և օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների մասին:

**Հոդված 4**

**Համագործակցությունը և փոխադարձ օգնությունը**

1. Արձանագրությունները, որոնց նախապատրաստումն ու ստորագրումը նախատեսված են սույն Համաձայնագրով, և այլ փաստաթղթեր, որոնք կարող են կնքվել՝ հետագա պահանջներից էլնելով, պետք է համապատասխանեն սույն Համաձայնագրի դրույթներին և համարվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մաս:

Արձանագրություններ, որոնք պետք է կնքվեն Պայմանավորվող կողմերի միջև.

ա) ուղևորների և ապրանքների միջազգային փոխադրումների վերաբերող էլեկտրոնային տվյալների փոխանակման վերաբերյալ,

բ) ապրանքների, տրանսպորտային միջոցների և ուղևորների փոխադրման նկատմամբ կիրառվող ընթացակարգերի և մաքսային անցակետերում աշխատանքային ժամերի համաձայնեցման մասին,

գ) սույն Համաձայնագրի իրականացումն ապահովելու նպատակով սահմանային համատեղ դարպասի հիմնադրման և շահագործման պայմանների մասին:

2. Սույն Համաձայնագրի դրույթների կատարումն ապահովելու նպատակով Պայմանավորվող կողմերը պետք է.

ա) տրամադրեն անձնակազմ ապրանքների տեղափոխման և ուղևորների մեկնման նկատմամբ կիրառելի հսկողության մեթոդների մասին ուսուցման և տեղեկատվության փոխանակման նպատակով՝ Պայմանավորվող կողմերի պետությունների ազգային օրենսդրության համաձայն,

բ) կազմակերպեն համատեղ խորհրդակցություններ, վերապատրաստման դասընթացներ և հետազոտական փոխայցելություններ՝ փորձառության, գիտելիքների և լավագույն փորձի փոխանակման նպատակով,

գ) միմյանց տրամադրեն այն ապրանքների ցանկերը, որոնց ներմուծումը, արատահանումը կամ տարանցումն արգելված կամ սահմանափակված է:

**Հոդված 5**

**Մաքսային իրավախախտումների մասին տեղեկատվության փոխանակումը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավասու մարմին պետք է մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմինն անհապաղ ներկայացնի հետևյալ տեղեկատվությունը.

ա) ողջամիտ կասկածների մասին, որոնք կհիմնավորեն, որ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում կատարվել է կամ կկատարվի իրավախախտում,

բ) իրավախախտումների կատարման համար կիրառվող նոր մեթոդների և միջոցների մասին,

գ) կասկածելի ապրանքների մասին, որոնք կարող են մաքսային խարդախությունների առարկա դառնալ:

**Հոդված 6**

**Մաքսային տեղեկատվության փոխանակումը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի հարցման հիման վրա մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը պետք է տրամադրի հետևյալ տեղեկատվությունը.

ա) մի Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին տրամադրված պաշտոնական կնիքների, դրոշմների կամ ցանկացած մաքսային փաստաթղթի արժանահավատության մասին,

բ) էլքի երկրից մուտքի երկիր արտահանված ապրանքների՝ մուտքի երկիր օրինական ներմուծման կամ այդ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգերի կիրառման մասին,

գ) էլքի երկրից մուտքի երկիր ներմուծված ապրանքների՝ էլքի երկրից օրինական արտահանման կամ այդ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգերի կիրառման մասին,

դ) Պայմանավորվող կողմ յուրաքանչյուր պետության մաքսային կարգավորումների և օրենսդրության խախտման դեպքում Պայմանավորվող մյուս կողմի մոտ պահվող բոլոր փաստաթղթերի ու տեղեկատվության՝ ներառյալ այն մաքսային փաստաթղթերի, տեղեկատվության և փաստաթղթերի մասին, որոնք Պայմանավորվող մյուս կողմը կարող է ստանալ երրորդ երկրներից,

ե) Այդ ճանապարհով փոխանցված բնօրինակ փաստաթղթերը պետք է անհապաղ վերադարձվեն այդ բնօրինակ փաստաթղթերը տրամադրած Պայմանավորվող կողմի պահանջի դեպքում:

**Հոդված 7**

**Տեղեկատվության փոխանակման ձևեր**

1. Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրով տրամադրվող օգնությունը պետք է իրականացվի անմիջապես Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից:
2. Օգնության հարցումները, դրանց պատասխանները, կցված տեղեկատվությունը և փաստաթղթերը, եթե այդպիսիք կան, որպես կանոն՝ պետք է գրավոր փոխանցվեն մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին: Հրատապ դեպքերում հարցումները կարող են կատարվել հեռախոսով, բայց իրավասու մյուս մարմնի պահանջի դեպքում դրան պետք է հաջորդի գրավոր հարցումը:
3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ տեղեկատվության և տվյալների փոխանակումը պետք է կատարի նախընտրաբար էլեկտրոնային եղանակով, որն ի վերջո հիմքեր կստեղծի «մեկ պատուհանի» համակարգի ներդրման համար:

**Հոդված 8  
Վարչական օգնություն հայցելը**

1. Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի հարցումով մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը պետք է տրամադրի հայցվող փաստաթղթերը և ընթացող հետաքննությանն առնչվող տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվություն ապրանքների, տրանսպորտային միջոցների և ուղևորների՝ իրենց պետությունների համապատասխան տարածք մուտքի և ելքի մասին:
2. Սույն Համաձայնագրի դրույթների համաձայն կատարված վարչական օգնության հայցումը կարող է մերժվել հայցվող իրավասու մարմնի կողմից՝ ելնելով ինքնիշխանության, անվտանգության և հասարակական կարգը պահպանելու անհրաժեշտությունից:
3. Սույն Համաձայնագրով սահմանված վարչական օգնության շրջանակներում տրամադրված տեղեկատվությունը և փաստաթղթերը պետք է օգտագործվեն բացառապես մաքսային իրավախախտումները կանխելու, քննելու և հետապնդելու նպատակով՝ չխախտելով Պայմանավորվող կողմ պետությունների և երրորդ անձանց իրավունքները:

**Հոդված 9  
Համատեղ կոմիտե**

1. Սույն Համաձայնագրի դրույթների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Պայմանավորվող կողմերը կստեղծեն Համատեղ կոմիտե՝ իրավասու մարմինների հովանու ներքո և փոխադարձ համակարգմամբ:
2. Համատեղ կոմիտեն պետք է հանդիպի տարին առնվազն մեկ անգամ կամ, անհրաժեշտության դեպքում, Պայմանավորվող կողմերից որևէ մեկի պահանջով:
3. Համատեղ կոմիտեն որոշումները կայացնում է միաձայն:
4. Համատեղ կոմիտեն կարող է որոշել ստեղծել ենթակոմիտեներ և աշխատանքային խմբեր, եթե համարի, որ դրանք անհրաժեշտ են իր առջև դրված խնդիրների լուծմանն աջակցելու համար:

**Հոդված 10  
Տարաձայնությունների կարգավորումը**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դիմել մյուս Պայմանավորվող կողմին՝ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման, կատարման և փոփոխության հետ կապված խորհրդակցություն անցկացնելու կամ ցանկացած հնարավոր տարաձայնություն կարգավորելու համար: Համատեղ կոմիտեի շրջանակներում Պայմանավորվող կողմերի միջև անցկացվող խորհրդակցությունները պետք է սկսվեն գրավոր դիմումն ստանալուց 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ որոշում չկայացվի:
2. Եթե Համատեղ կոմիտեի շրջանակներում տարաձայնության կարգավորման վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա այն պետք է կարգավորվի Պայմանավորվող կողմերի միջև դիվանագիտական ուղիներով:

**Հոդված 11  
Փոփոխություններ և լրացումներ**

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և նրանց միջև փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Այդ արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրով ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կկազմեն դրա անբաժանելի մասը:

**Հոդված 12  
Ուժի մեջ մտնելը և դադարեցումը**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից, որով Պայմանավորվող կողմերը միմյանց տեղեկացնում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին:

2. Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 10 տարվա ընթացքում և ինքնաբերաբար երկարաձգվում է նույն ժամանակահատվածով, եթե Պայմանավորվող կողմերից մեկը ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր չի ծանուցում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել մինչև սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամանակահատվածը լրանալը՝ Պայմանավորվող կողմերից մեկի կողմից սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին դադարեցման օրվանից առնվազն մեկ տարի առաջ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով:

Սույն Համաձայնագիրը կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի դեկտեմբերի 21-ին, համապատասխանաբար \_\_\_\_\_ թվականի \_\_ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարընթերցումների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

*Համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2017 թ. նոյեմբերի 14-ին*